Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-959[1]-11.02.2011-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀՈԴՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985 թվական) 53-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 53. ԳՈՒՅՔԻ ՄԱՆՐ ՀԱՓՇՏԱԿՈՒՄ

1. Գույքի մանր չափերով հափշտակությունը՝ գողության, յուրացման, վատնման, պաշտոնեական դիրքի չարաշահման կամ խարդախության միջոցով՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածում նախատեսված մանր չափերով հափշտակություն է՝ յուրացման, վատնման, պաշտոնեական դիրքի չարաշահման եղանակով

- իրավախախտումը կատարելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)
- գողության միջոցով իրավախախտումը կատարելու պահին Հայաստանի Հանրապետության սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող գումարը /արժեքը/:»

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյան	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 1. «ՀՈԴՎԱԾ 53. ԳՈՒՅՔԻ ՄԱՆՐ ՀԱՓՇՏԱԿՈՒՄԸ 1. Գույքի մանր չափերով հափշտակությունը՝ գողության, յուրացման, վատնման, պաշտոնեական դիրքի չարաշահման կամ խարդախության միջոցով՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով: 2. Սույն հոդվածով նախատեսված մանր չափերով հափշտակություն է՝ - գողության միջոցով իրավախախտումը կատարելու պահին Հայաստանի Հանրապետության սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող գումարը (արժեքը). -յուրացման, վատնման, պաշտոնեական դիրքի չարաշահման կամ խարդախության եղանակով իրավախախտումը կատարելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)»:	Ընդունվել է	Այդ կապակցությամբ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն: